Տ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱԲԵՂԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Ս. ԿՅՈՒՐԵՂ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻՆ ՀԱՅ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեծ են եղել կյուրեղյան աշխատությունների տեղն ու դերը հայ միջնադարի դավանական գիտակցության մեջ: Մասնավորապես Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը հիմնված է Ս. Կյուրեղի վարդապետական համակարգի վրա: Եվ սա պատահական չէ, քանի որ տակավին հայ դպրության արշալույսին եկեղեցու ապագա սպասավորները՝ սահակ-մեսրոպյան սերնդի ուսանողները, իրենց կրթությունը կատարելագործում էին Ալեքսանդրիայի ուսումնագիտական կենտրոններում: Միանգամայն բնական է, որ նրանք այնտեղ պետք է հմտանային ոչ միայն սուրբգրային մեկնաբանության, այլև վարդապետական (դավանական) ասպվածաբանության մեջ՝ յուրացնելով Ալեքսանդրյան Եկեղեցու քրիստոսաբանության գլխավոր սկզբունքները: Արդեն Ե դարում ի պետս Հայ Եկեղեցու օրավուր աճող գաղափարական պահանջների բավարարման, նրա վարդապետական նկարագրի զորացման, հայացվում էին Եկեղեցու հայրերի երկերը: Ի շարս Ս. Աթանաս Ալեքսանդրացու Ս. Հովհան Ոսկեբերանի, Ս. Եփրեմ Ասորու, Ս. Եպիփան Կիպրացու, Սեբերիանոս Գաբաղացու, Եվսեբիոս Եմեսացու, Սեբերիանոս Եմեսացու եւ այլոց երկերի հայերեն են թարգմանվում նաեւ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու աշխատությունները, մասնավորապես սուրբգրային մեկնությունները: Քաղկեդոնի (451) ժողովից հետո, ելնելով եկեղեցաքաղաքական իրապայմանների հրամայականից, սկսվեցին հայերեն թարգմանվել նաեւ դավանաբանական բնույթի երկեր: Քրիստոսաբանական վեճերի սասրկացման շրջանում, հասկանալի պատճառով, ըստ վարդապետական կարեւորության հայացվեցին Ս. Կյուրեղի «Գիրք զանձուց» եւ «Գիրք պարապմանց» ժողովածուները: Հայ թարգմանական ավանդությունը այդ երկերի թարգմանությունը կապում է Ստեփանոս Սյունեցու (+735) անվան հետ: Փաստերը վկայում են, որ նա 714-715 թթ. հայացրել է «Պարապմանց» գիրքը: Սակայն, ելնելով այդ ժողովածուի դավանաբանական կարեւորությունից կարելի է ենթադրել, որ Հայ Եկեղեցին դրան եւ Ս. Կյուրեղի մյուս համաբնույթ երկերին ծանոթ էր մինչ այդ թարգմանությունը: Այդ են հավաստում ինչպես «Պարապմանց»» գրքից «Կնիք հաւատոյ»-ում (Է-դ) բերված քաղվածքները, այնպես էլ կյուրեղյան վարդապետության դիրքորոշումն արտահայտող Տիմոթեոս Կուզի (+477) «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» աշխատության հայերեն թարգմանությունը, որ կատարվել է 480-484 թթ.: Ինչպես հայտնի է, այս երկի հունարեն բնագիրը մեզ չի հասել: Այդ աշխատությունն այսօր աշխարհին հայտնի է միայն հայերեն թարգմանությամբ[1]: Արդեն հակաքաղկեդոնական դավանական մատենագրութ-

1 «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» աշխատասիրութեամբ Կ. Տեր-Մկրտչեանի և Ե. Տեր-Մինասեանի, Էջմիածին, 1908: Ըստ բելգիացի բանասեր Լեբոնի այս երկի ասորերեն թարգմանությունը ոչ այլ ինչ է, քան բնագրի փոփոխված և համառուրված տարբերակը, **J. Lebon**, Version armenienne et version syriaque de Timothée Elure, «Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 715-718, հղումն ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, Հայ հնագույն թարգմանությունների մատենաշարը, հեղինակ հրատ. մեջ, «Գիրք Ծննդոց» քննական բնագիր, աշխատ. Ա. Ս. Ջեյթունյանի, Եր., 1985, էջ 21:

յան երախայրիքը հանդիսացող այս երկում ի շարս Եկեղեցու հայրերի, իր արժանի տեղն է զբաղեցնում Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին: Լինելով անձնուրաց հետեւորդն ալեքսանդրյան աստվածաբանության լավագույն ավանդներն իր մեջ խտացրած կյուրեղյան վարդապետության՝ Տիմոթէոս Կուզն իր «Հակաճառությամբ» առավելագույն համակողմանիությամբ ու խորությամբ ներկայացնում է այդ դպրոցի սկզբունքները: Ուստի հասկանալի է, որ այդ ժողովածուի մեջ լայնորեն պետք է ընդգրկվեին հատվածներ Ս. Կյուրեղի մատենագրական ժառանգությունից՝ փաստելու համար այդ դպրոցի որդեգրած քրիստոսաբանական ճշմարտությունները: Հետագայի հայ մատենագիրները դավանաբանական երկեր շարադրելիս պետք է հենվեին այդ ժողովածուի վրա՝ որդեգրելով ինչպես նրա բովանդակությունը, այնպես էլ կառուցվածքը: Տիմոթեոս Կուզի «Հակաճառությունը» հաճախ հայ դավանաբան հեղինակներին ծառայել է իբրեւ սկզբնաղբյուր[2]:

Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու հեղինակությանն է դիմում Հայ Եկեղեցու դավանական մաքրությանը նախանձախնդիր մյուս երեւելի եկեղեցականը՝ Ս. Հովհան Օձնեցի հայրապետը (+728): Իր «Ընդդէմ երեւութականաց» ճառում նա վկայաբերում է Ս. Կյուրեղի տասներկու նզովքների մեկնությունից մի հատված. «Անվիշտ եւ անմահ էր Բանն, որ յԱստուծոյ Հաւրէ, յաղագս այնր իւրացոյց իւր մարմին, որ վշտանալն կարէ»[3]: Վկայութիւնս կազմված է սկզբնաղբյուրի (Անվիշտ եւ անմահ էր Բանն, որ յԱստուծոյ Հաւրէ, եւ ի վեր է քան զապականութիւն, եւ կենդանի առնէ զամենայն, եւ չէ ընդունիչ տրտմութեանց: Եւ թէպէտ եւ այսպէս է բնութեամբ Բանն Աստուծոյ իւրացոյց իւր մարմին ընդունիչ, որ վշտանալ սովոր է)[4] շարահյուսորեն իրարից հեռու երկու ընդգծյալ հատվածների կցումից՝ «յաղագս այնր» բառակապակցության միջոցով[5]:

Ս. Կյուրեղի առ Սեկունդոս կամ ավելի ճիշտ Սուկենսոս (Երկրորդ թղթից մի հատված է վկայաբերվում Ս. Հովհան Օձնեցուն վերագրված «Վասն Տեսակի եւ վասն յանհատիցն զոլ տեսանելի բնութիւն, եւ վասն բաժանման Բանի եւ միաւորութեան, եւ վասն մարմնաւորութեան Տեառն եւ թէ որպէս ասելի է մի բնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ» ընդարձակ խորագրով երկում, որտեղ կարդում ենք. «զայսոսիկ եւ սուրբն Կիւրեղ յերկրորդ թղթին, զոր առ Սուկենսոն գրեաց, մեկնեալ եւ զմի բնութիւն մարմնացելոյ Բանին ասուծոյ, եւ ասէ այսպէս. «Զի եթէ որոց մի բնութիւն Բանին Աստուծոյ ասեն՝ թուլացուցանեմք ոչ ասելով ի նմա եւ զմարմնանալն իբր զարտաքսող տնտեսութեանն էր բանք նոցա, այլ այսպէս հարցեալ զնոսա մերքն, եթէ մի բնութիւն միայն է Բանին, որպէ՞ս լիցի կատարեալ մարդ, կամ զիա՞րդ ունելով զբոլորն էութիւն մեր, այլ որովհետեւ զմարմնանալոյն կատարելութիւն եւ զէութիւն մարդոյ եւ զգոյութիւն բոլոր ունել ասեն Բանին մարմնացելոյն, թոյլ տուք նոցա, որք ի ցուպ եղեգան յեցեալ են»[6]:

---

2 Այս մասին հանգամանալից տե՛ս **Ն. Ներսէս վրդ. Ակինյան**, Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1909:

3 Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 30:

4 «Գիրք Պարապմանց», էջ 490:

5 Տե՛ս **Ն. Քյոսեյան,** Հովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառի հայրախոսական աղբյուրները. «Ս. Հովհան Օձնեցի հայրապետը եւ իր ժամանակը» հոդվ. ժողովածու, Ս. Էջմիածին, 2004, էջ 98:

6 Վկայությունս տարբերվում է հայերեն թարգմանությամբ հայտնի տարբերակից, «Գիրք Պարապմանց», էջ 419: Մեկ ուրիշ թարգմանություն է ներկայացնում Տիմոթեոս Կուզի հակաճառության մեջ վկայաբերված քաղվածքը, անդ, էջ 162, տե՛ս **Ն. Ներսես վրդ. Ակինյան,** Յովհաննէս կաթողիկոս Օձնեցւոյ նորագիւտ գրուածք

Կյուրեղ Ալեքսանդրացու մեկ այլ՝ Թեոդոս կայսրին հղած թղթից է վկայաբերված հետեւյալ հատվածը, որն առկա է հիշյալ աշխատության «Եթէ յորմէ եւ երբ կոչեցաւ Քրիստոս» խորագրով ենթաբաժնում: «Զպիտոյս ասեմ ես, զի ոչ ապրուած Բան առանց մարմնոյն եւ ոչ լոկ մարմինն ի կնոջէ ծնեալ առանց Բանին միաւորութեանն կոչելի էր Յիսուս Քրիստոս, վասն զի տնտեսական միաւորութեամբ, որ յԱստուծոյ՝ Աստուածն բան եւ որ ընդ նմա անճառապէս միացաւ մարմինն՝ կոչեալ եղեւ Յիսուս Քրիստոս»[7]: Այս վկայությամբ հեղինակը փորձում է ցույց տալ, թէ Փրկչի տնօրինական գործունեությամբ է արդարացված նրա Հիսուս Քրիստոս անվանումը, ում մեջ արտացոլված է Տիրոջ աստվածմարդկային բնության ներդաշն ամբողջությունը:

Ս. Կյուրեղի վաստակի հանդեպ պատշաճ ուշադրություն է ցուցաբերել Ս. Հովհան Օձնեցու նշանավոր ժամանակակիցներից մեկը՝ Խոսրովիկ Թարգմանիչը: Աստվածաբանական խորությամբ աչքի ընկնող նրա դավանաբանական երկերում քանիցս վկայակոչվում են Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու ժառանգությունից զանազան հատվածներ: Հաստատելու եւ ցույց տալու համար, թե Տիրոջ մարմինը չարչարվում է Տիրոջ իսկ թողտվությամբ եւ գիտությամբ, որ կրտրանքները վերաբերում են մարմնացած Բանի միավորյալ բնությանը եւ ոչ լոկ մարդկությանը կամ սոսկ աստվածությանը՝ Խոսրովիկը վկայաբերում է հետեւյալ կյուրեղյան հատվածները.

ա. Եւ Կիւրեղ ասէ. «Անգիտացաւ թողացուցեալ երբեմն մարմնոյն կրել զիւրսն» (էջ 121)[8]:

բ. Որպէս եւ Կիւրեղ ասէ. «Յեսր անճառ միաւորութեանն, թէ Աստուած ասասցես զէմմանուէլն, զմարմնացեալ Բանն, որ յԱստուծոյ Հաւրէ, իմանամք, եւ եթէ մարդ ասասցես, ոչ զայլ ոք, այլ զնոյն Ինքն զմարմնացեալն վասն մեր զԲան ապրուծոյ իմանամք, եւ շաւշափելի եւ տեսանելի եղեալ զանշաւշափելի եւ զաներեւոյթ Բանն, եւ ոչ ուրոյն ի վեր մարմնոյն զայս ասեմք, որ շաւշափելին էր եւ տեսանելին» (էջ 122):

գ. «Եւ Կիւրեղ ասէ. «Ի խոստովանելն մեր, թէ եղեւ Բանն մարմին, ոչ եթէ շփոթութիւն ինչ ասեմք բնութեանց, այլ կացեալ մնացեալ անքակաբար եւ անշփոթաբար ի վեր Բան զմիտս եղելոց» (159):

Այս վկայությունները քաղված են Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու Գանձուց գրքից:

Հայ ինքնուրույն մատենագրության մեջ Ս. Կյուրեղի հեղինակությունը թերեւս չորրորդ անգամ վկայակոչվում է «Հարցմունք Յաղագս մարմնաւորութեանն Տեառն զանազանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ իմաստասիրի» խորագրով աշխատության մեջ: Ինչպես հայտնի է, Պետրոսը Սյունիքի եպիսկոպոսն է եղել 547-556 թթ.: Ուստի պետք էր ենթադրել, որ այս հարցուպատասխանը շարադրվել է Զ դարակեսին: Սակայն քանի որ այս երկում վկայաբերված են հատվածներ 714, 716-717 թթ. Ստեփանոս Սյունեցու իրականացրած Ս. Կյուրեղի Պարապմանց գրքից եւ Նյուսացու (=Նեմեսիոսի) «Տեսութիւն մարդոյն կազմութեանն» երկի հայերեն թարգմանություններից,

մը Բանին մարմնաորութեան վրայ, «Յուշարձան» գրական ժողովածոյ, Վիեննա, 1911, էջ 341, տպ. 24-31:

7 Տե՛ս «Յուշարձան», էջ 344 տպ. 133-136:

8 Էջահամարներն ըստ՝ **Գարեգին վրդ. Յովսէփեան**, Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար), Պատմական-մատենագրական ուսումնասիրութիւն, Վաղարշապատ, 1899:

ուսքի իրավացիորեն ենթադրվել է, թե այս աշխատությունը շարադրվել է այդ թարգմանություններից հետո[9]: Ս. Կյուրեղը վկայակոչվում է Ա եւ ԺԷ հարցումներում. Հրց.՝ «Կիւրեղ Աղեկսանդրացի համառաւտ բանի սահմանեաց զՀոգին Սուրբ ընդդէմ ամբարշտին Մակեդոնի»[10]. այս բառերով հեղինակն ակնարկում է «Գանձուց» գրքի համապատասխան դրվագը եւ «Ս. Երրորդության» նվիրված ընդարձակ ճառի ԺԹ-ԽԷ գլուխները, ուր մասնավոր անդրադարձով ժխտվում է Մակեդոնի հերձվածը: Հրց. ԺԷ՝ «Եւ զայս Կիւրեղ Աղեկսանդրացի ուսուցանէ, ի Պարապմանցն ասէ՝ Քրիստոսդ անուն ոչ սահման է եւ ոչ սահմանի զաւրութիւն»[11] վկայությունը ոչ բառացի քաղվածություն է «Պարապմանց» գրքից, ուր կարդում ենք «Քրիստոսդ անուն ոչ սահմանի զաւրութիւն ունի եւ ոչ զուրուք զէութիւն»[12]:

Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու երկերից բերված քաղվածքները, հասկանալի պատճառով, առավել ընդարձակ տեղ են զբաղեցնում հատկապես «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ: Ինչպես հայտնի է, դավանաբանական թղթակցություններ պարունակող այդ ժողովածուն, որի սկզբնավորումն ավանդությունը կապում է Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի անվան հետ[13], ընդգրկում է Ե-ԺԳ դարերի ընթացքում շարադրված աստվածաբանական նամակները: Առավել հաճախակի եւ ընդարձակորեն հիշատակված ու վկայակոչված են հատվածներ Ս. Կյուրեղի Պարապմանց գրքից, որ բաղկացած է գերազանցապես քրիստոսաբանական ուղղվածություն ունեցող նյութերից: Վկայությունների թվում կան այնպիսիք, որոնք իրենց բովանդակությամբ առավելագույնս համապատասխանելով Հայ Եկեղեցու քրիստոսաբանական սկզբունքներին կրկնվում են տարբեր թղթերում: Այսպես Ստեփանոս Սյունեցու հունաց Գերմանոս պատրիարքին հղած թղթում Հայ Եկեղեցու քրիստոսաբանական դիրքորոշումն ամրապնդելու նպատակով քանիցս վկայակոչվում է Ս. Կյուրեղի հեղինակությունը: Սյունեցին գրում է. «...մեծն Կիւրեղ, յորժամ եհարց ցնա Սուկենոս եպիսկոպոս Նիոյկեսարիայ քաղաքին, թէ պա՞ղտ է երկուս բնութիւնս ասել Բանին մարմնացելոյ թէ՞ մի: Եւ նա յայտնապէս գրով պատասխանի առնէ թէ, յետ միաւորութեան ոչ անջատեմք զբնութիւնսն ի միմեանց, եւ ոչ երկուս որդիս հատանեմք զմին եւ անբաժանելին, այլ մի ասեմք, եւ որպէս հարքն ասացին, մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ»[14]: Այս տողերը, որոնք քաղված են Պարապմանց գրքի մաս կազմող Ս. Կյուրեղի Առ Սեկունդոս Առաջին թղթից[15], կրկնվում են Սահակ վարդապետի (Մռուտ Թ դ)՝ Փոտ պատրիարքին հղած թղթում,[16] «Ընդդէմ երկաբնակաց Նեստորականացն» խորագրով աշխատության մեջ[17], Սամվել Կամրջաձորեցու (Ժ-ԺԱ դդ.)՝ Թեոդորոս Մետրոպոլտին հղած թղթում[18], Խաչիկ Արշարունի կաթողիկոսի (972-992)՝ Սեբաստիայի մետրոպոլիտին ուղղած թղթում[19]: Դարձյալ

9 **Գ. Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Բ, էջ 170:
10 Տե՛ս Անդ, էջ 182 տ. 2-3:
11 Անդ, էջ 190, տ. 16:
12 «Գիրք Պարապմանց» (Ա), էջ 19:
13 Այս մասին տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» (հանրագիտարան), Եր., 2002, էջ 213-214:
14 Տե՛ս «Գիրք թղթոց», խմբագրությամբ Նորայր արք. Պողարյանի, Երուսաղէմ, 1994, էջ 439:
15 «Գիրք Պարապմանց», էջ 409:
16 Անդ, էջ 527-528:
17 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 444:
18 «Գիրք թղթոց»,1994, էջ 561:
19 Անդ, էջ 587:

Սահակ Մռուտ վարդապետին վերագրված «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» գրվածքում կարդում ենք. «...Գրէ առ Ակակ Մելիտինեայ եպիսկոպոսն, թէ՝ աստուածային գիրք, ի սուրբ Կուսէն ասեն առնուլ զմարմին Աստուծոյ Բանին, սակայն է մի եւ միայն Որդի եւ մի Տէր Յիսուս Քրիստոս յերկուց բնութեանց միաւորեալ յեւ միաւորութեան անդէն ի բաց բարձեցելոյ յերկուս հատմանն եւ մի զոլ հաւատամ զՈրդւոյ բնութիւն»[20]: Այս քաղվածքը, որ հիրավի բերված է Պարապմանց գրքի մաս կազմող Ս. Կյուրեղի՝ Ակակիոս եպիսկոպոսին հղած թղթից[21], վկայակոչված է նաեւ Ստեփանոս Սյունեցու եւ Խաչիկ կաթողիկոսի հիշյալ թղթերում[22]: Պարապմանց գրքից առավել հաճախ վկայակոչվում են հատվածներ այդ ժողովածուի մեջ առկա Ս. Կյուրեղի նշանավոր Երկոտասան նզովքներից: Այսպես, Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի (615-628) «Ի Պարսս» հղած թղթում Ս. Կյուրեղի անունով վկայակոչված է հետեւյալ նզովքը. «Որ ոչն հաւատայ, թէ Բանն Աստուած չարչարեցաւ մարմնով, խաչեցաւ մարմնով, ճաշակեաց զմահ մարմնով, եւ եղեւ անդրանիկ ի մեռելոց. քանզի միշտ կենդանի է եւ կենդանացուցանէ զամենեսեան որպէս Աստուած՝ եղիցի նզովեալ»: Այս տողերը գրեթե ճշգրտորեն համապատասխանում են (սկիզբը մի փոքր տարբեր. «Եթէ ոք ոչ խոստովանեսցի զԲանն որ յԱստուծոյ...») 12-րդ Նզովին[23]: Ինչպես հիշատակում է Խաչիկ կաթողիկոսը, Ս. Կյուրեղի 7-րդ Նզովքից է քաղված հետեւյալ վկայությունը. «Եթէ ոք ոչ, ասէ, միով երկրպագութեամբ եւ փառաւորութեամբ պատուեսցէ զԷմմանուէլն՝ նզովեալ եղիցի»[24]: Իրականում այս նզովքը երկրորդ մասն է հեղինակի 8-րդ նզովքի, ուր կարդում ենք. «Եւ ոչ միով երկրպագութեամբ պատուեսցէ զԷմմանուէլն եւ մի փառաւորութիւն տացէ նմա, ըստ լինելոյ Բանին մարմին նզովեալ եղիցի»[25]:

Կյուրեղյան նզովները վկայակոչվում են նաեւ Սահակ վրդ. Մռուտի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» գրվածքում, դրանք են՝ «Թէ ոք ոչ խոստովանեսցի բնութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ Հաւր, եւ մի Քրիստոս հանդերձ մարմնով իւրով, զնոյն Աստուած համանգամայն եւ մարդ, նզովեալ եղիցի[26]: «Եթէ ոք բաժանեսցէ զբանս զրոց սրբոց զաւետարանաց եւ զառաքելոց եւ զմարգարէից եւ զոմանս աստուածութեանն ասասցէ եւ զոմնս՝ մարդկութեանն, նզովեալ եղիցի»[27]: Այս նզովները ճշգրտորեն համապատասխանում են Բ եւ Դ նզովներին[28]:

Կյուրեղյան նզովներն ակնարկվում են Ս. Գրիգոր Նարեկացու «Առ հայրն Կճաւայ վասն կարծեացն անիծելոյն Թոնդրակեանց...» թղթում[29]:

Կրկնվող, սիրված վկայություններից է նաեւ Ս. Կյուրեղի Թեոդոս կայսեր հղած թղթի հետեւյալ հատվածը. «Թէպէտ եւ ի զանազանից, ասէ, եւ յանմանից եկեալ առ միմեանս բնութիւնք. մի Քրիստոս, մի Որդի, մի բնութիւն խոստովանելի հանդերձ առեցելովն»: Այս

20 Անդ, 1901, էջ 343-444:
21 «Գիրք Պարապմանց», 432:
22 Անդ, 1994, էջ 440, 588:
23 «Գիրք Պարապմանց», էջ 489-490:
24 Անդ, 1994, էջ 585:
25 «Գիրք Պարապմանց», էջ 486:
26 «Գիրք թղթոց», 1901, էջ 445:
27 Անդ, էջ 482:
28 «Գիրք Պարապմանց», էջ 478, 481 նաև՝ Գիրք թղթոց, 1901, էջ 404:
29 «Գիրք թղթոց», էջ 622:

վկայությունը, որ քաղված է «Առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս՝ Յաղագս ուղղափառ հաւատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս» խորագրով թղթից[30], բերված Ստեփանոս Սյունեցու Գերմանոսին հղած թղթում[31] եւ Սահակ վրդ. Մռուտի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» խորագրով երկում[32]:

Պարապմանց գրքի մաս կազմող այլ միավորները նմանապես ընդարձակորեն վկայակոչվել են Հայ Եկեղեցու հայրերի թղթակցություններում: Ստեփանոս Սյունեցու՝ Գերմանոս պատրիարքին հղած նամակում կարդում ենք. «Եւ դարձեալ յերկրորդ թղթին առ նոյն Սուկենոս. Այլ ասեն. ասէ, հակառակորդքն, թէ մի բնութիւն է մարմնացելոյ Բանին Աստուծոյ, հարկ է ամենայնիւ շփոթումն ընդունել եւ խառնակումն, որպէս ծախեցելոյ եւ ի ներքս զուղացելոյ մարդկայնոյ բնութեան, եւ անգիտացան դարձեալ, որք զուղիղսն թիւրեն, եթէ ըստ ճշմարտութեան է մի բնութիւն Բանին մարմնացելոյ»[33]: Վկայությունը, հիրավի, բառացիորեն քաղված է հեղինակի առ Սեկունդոս Բ թղթից[34]: «Եւ դարձեալ նոյն Կիւրեղ գրէ առ Եւդոգիոս քահանայ» կարդում ենք Ստեփանոս Սյունեցու հիշյալ թղթում. «Արդ, եթէ ասեմք, ասէ, միաւորութիւն խոստովանիմք թէ մարմնոյն հոգեւորի իմանալոյ եւ Բանին, սակայն զմիութիւնն խոստովանեցելոյ, ոչ եւս մեկուսին ի միմեանս միաւորեալքն, այլ մի որդի, այնուհետեւ եւ մի բնութիւն նորա»[35]: Պարապմանց գրքում եւ առհասարակ հայերեն թարգմանությամբ այսօր բացակայում է Եվդոգիոս քահանային հղած թուղթը: Պետք է ենթադրել, որ այն թարգմանված է եղել նույն Ստեփանոս Սյունեցու ջանքերով: Վկայությունը համապատասխանում է հունարեն բնագրին[36]: Ստեփանոս Սյունեցու՝ Սահակ Մռուտի թղթերում վկայաբերված քաղվածքը («Եւ միաւորեալ միանգամայն մի համարեալ ընդ մարմնոյ հրացուցեալ զնորայսն միաւորեալ եւ իւր ընդ նմա զիւրոյն բնութեանն ներգործութիւն»)[37] բառացիորեն համապատասխանում է Պարապմանց գրքի «Յաղագս կայծականն» խորագրված Թ գլխի նույնական տողերին[38]:

Պարապմանց գրքից մեծ ու փոքր հատվածներ վկայակոչված են նաեւ Սահակ Մռուտ վարդապետի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» գրության մեջ: Կյուրեղյան վկայությունների բազմությունն հատկապես այս թղթում պայմանավորված է պատմականորեն հասկանալի այն պարզ իրողությամբ, որ Կյուրեղը պայքարել է Նեստորի մարդադավան հերձվածի դեմ, որ նրա երկերի ճնշող մեծամասնությունը նվիրված է այդ խնդրին: Ահա այդ հատվածների սկիզբն ու վերջը.

ա. Առցուք մեզ աւրինակ դարձեալ զմարդ. զի ահա այլ բնութիւն է հոգւոյ եւ այլ՝ մարմնոյ... խառնեալ ի մարմնի եւ միացեալ ընդ նմա եղեւ մի բնութիւն[39]:

---

30 Տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 271:

31 «Գիրք թղթոց», 1994, էջ 439:

32 «Գիրք թղթոց», 1901, էջ 343:

33 Անդ, էջ 439:

34 «Գիրք Պարապմանց», էջ 417:

35 «Գիրք թղթոց», էջ 439: Այս քաղվածքը նույնությամբ վկայաբերված է նաև Խաչիկ Կաթողիկոսի՝ Սեբաստացի մետրոպոլիտին հղած թղթում, տե՛ս անդ, էջ 588:

36 Migne, PG, t. 77, 222-228:

37 «Գիրք թղթոց», էջ 442, «Գիրք թղթոց», 1901, էջ 450:

38 «Գիրք Պարապմանց», էջ 32:

39 «Գիրք թղթոց», 1901, էջ 335: Քաղված է Պարապմանց գրքի Խ գլխից (Առ Սեկունդոս, Ա):

բ. «Որ եպես զիս, եպես զՀայր իմ» եւ «Ես եւ Հայր իմ մի եմք: Եւ դարձեալ. Զի՞ խնդրէք... Տեառն Աստուծոյ քոյ երկրպագցես եւ զնա միայն պաշտես»[40]:

գ. Ոչ է բաժանեալ առանձնական այլայլութիւն իբր ըստ մասին... թէ եւ յառման իմանի լեալ մարմնոյ հոգի ունաւղի իմանալոյն[41]:

դ. Արդ, չարահնարութեամբ է զմինն բնութեամբ եւ ճշմարտապէս Որդի մարմնացեալ եւ մարդացեալ բաժանեալ յերկուս[42] (այսքան):

ե. Իսկ զԱւետարանսն Փրկչին մերոյ զայնս ոչ բնութեամբք երկու եւ ոչ դիմաւք բաժանեմք... ոչ ուրեք երկու ամենեւին, այլ մի եւ միայն յերկակաց իմանի Քրիստոս[43]:

զ. Հրաժարեմք ասել զայն յաղագս Քրիստոսի, թէ վասն զգեցողին զգեցեալն պաշտեմք... զի որ զայս ասէ բաժանէ դարձեալ յերկուս Քրիստոս[44]:

է. Զի յեկամուտ ապականութենէն ապրեսցուսցէ զմեր հողեղէն մարմին ըստ միաւորութեան տնաւրէնութեանն զիւր կեանս ի ներս արկեալ, իւր արարեալ եւ զմարդկայինն հոգի, եցոյց զնա ի վեր քանն զմեղս, զի զիւրոյ բնութեանն զսերտութիւն եւ զանփոփոխութիւն իբրեւ զասր զներկ ինչ արկեալ եւ զանեալ զնա: Արդ, վասն զի եղեւ մարմինն կենարարին ամենայն բանիւ, քան զմահու եւ զապականութեան ի վեր մնայ իշխանութիւն»: Ի տարբերություն նախորդ վկայությունների, որոնք միակտուր են, այս վկայությունը կազմված է երկու տարբեր տեղերից քաղված վկայությունների ձուլումից: Դրանք քաղված են «Առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս՝ Յաղագս ուղղափառ հաւատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս երկից: Վկայության առաջին հատվածը հասնում է մինչեւ «արկեալ եւ զունեալ զնա» բառերը, որոնց հաջորդող հատվածը քաղված է բնագրի մի պարբերություն ներքեւ գտնվող մասից[45]:

ը. Չարահնարութեամբ ասեն ոմանք մարդկայնով բնութեամբ չարչարել Քրիստոսի... Իսկ անորոշապէս դնել թուի ի մէնջ ուղղակի հաւատոյ նշանական, բայց նոքա ոչ այսպէս իմանան[46]:

թ. Յեսր յարութեանն էր նոյն մարմին, որ չարչարեցաւ, կենդանարար ամենայնի (այսքան)[47]:

Հայերեն հնագույն թղթյա ձեռագրում (981 թ.) «Կիւրղի Աղէքսանդրացւոյ ընդդէմ Պաւղոսի Սամուսպացւոյ» խորագրի տակ վկայաբերված են զանազան հատվածներ «Պարապմանց գրքից» («Որ երեւեցաւ մարմնով, այսինքն է թէ՝ եղեւ մարմին Բան, որ յԱստուծոյ... եւ ծնունդն վերջին ըստ մարմնոյ ի Կուսէն տեսչութիւնք եւ նշանք եւ չարչարանք, մահն եւ յարութիւնն եւ համբառնալն եւ նստելն յաջմէ Հաւր»)[48]:

---

40 Անդ, էջ 443: Քաղված է «Պարապմանց գրքի» ԼԹ գլխից:

41 Անդ, էջ 343: Քաղված է «Պարապմանց գրքի» ԼԹ գլխից:

42 Անդ,էջ 443- 444, նաև՝464:

43 Անդ, էջ 444:

44 Անդ: Քաղված է Ս. Կյուրեղի առ Նեստոր թղթից, տե՛ս «Գիրք թղթոց», 1901, էջ 400:

45 Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 452, «Գիրք Պարապմանց», էջ 244, 245:

46 «Գիրք թղթոց», 1901, էջ 464: Քաղված է Առ Սեկունդոս Բ թղթից, տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 422:

47 «Գիրք թղթոց», էջ 475: Քաղված է Առ Սեկունդոս Բ թղթից, տե՛ս Գիրք Պարապմանց, էջ 419:

48 Տե՛ս «Մատեան գիտութեան եւ հաւատոյ. Դաւթի քահանայի» հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր, 981 (N2679), նմանապատություն, ուսումնասիրություն, վերծանություն, ծանոթագրություններ, ցանկեր, աշխատասիրությամբ՝ Ա. Ս. Մաթեւոսյանի, Եր., 1997, էջ 441-442:

Հաշվի առնելով դավանաբանական ակներև շահեկանությունը՝ հայ հեղինակները վկայակոչում են նաև հատվածներ Ս. Կյուրեղի մեկնողական երկերից: Մատթեոսի Ավետարանի մեկնության ներքո բերյալ հատվածները գրեթե նույնությամբ վկայակոչված են Ստեփանոս Սյունեցու եւ Սահակ Մռուտ վարդապետի երկերում. «Ընդ իւր միաւորեաց զմարմինն, որպէս ոչ է ասել ընդ Հայր՝ եւ ի Հայրէ Աստուած Բանն, եւ յիւր կազմեալ զնա ներգործութիւն բնաւորական, եւ մարմին պահեաց վասն ծնանելոյն ի մարմնոյ եւ լցոյց աստուածավայելուչ ներգործութեամբ եւ յիւրն եհան փառս: Նորին յերկուս կոյրսն. Եւ բժշկէ ձեռին մերձաւորութեամբ եւ ներգործութեամբ լի զոլ զիւր մարմինն ցուցանէ: Նորին՝ ի բժշկութիւն զսքանչելին Սիմովնի. քանզի բժշկեաց որպէս զԱստուած, զիւրոյ ձեռինն հպումն շնորհեալ անկելոյն ի մահիճսն. եւ վասն զինչ պատճառի. զի զիւրոյ բնութեան աստուածութեան ասեմ միազաւր ցուցցէ զիւրն մարմին ի ներգործութիւնսն»[49] : Ինչպես հայտնի է, Ս. Կյուրեղի Մատթեի Ավետարանի մեկնության հունարեն բնագիրը մեզ հասել է հատվածաբար՝ շղթա-խմբագիր մեկնությունների շնորհիվ[50]: Հայերեն թարգմանությամբ մեզ հասել է Մտթ. ԻԷ 51-ի մեկնության մի փոքրիկ մասը միայն, (տե՛ս գլ. Բ, ԺԷ), որը չի համապատասխանում վկայությանը: Կարելի է ենթադրել, որ հունարենին քաջատեղյակ Ստեփանոս Սյունեցու ձեռքի տակ եղել է Ս. Կյուրեղի այդ երկը, եւ նա ըստ պատշաճի թարգմանել է տվյալ հատվածը, որը եւ նույնությամբ անցել է Սահակ Մռուտ վարդապետի թղթի մեջ:

Անխմոր հացի ծիսական, աստվածաբանական անհրաժեշտությունը փաստելու նպատակով Սահակ Մռուտ վարդապետը գրում է. «Իսկ խմորն չարութեան եւ ապականութեան է նշան որպէս ասէ Կիւրեղ ի Ղեւտականին մեկնութեանն»[51]: Ղեւտացվոց խմբագիր մեկնության մեջ Կյուրեղ Ալեքսանդրացու անվամբ բերված համապատասխան հատվածում կարդում ենք. «Խմորն հնարախոհութեան եղիցի աւրինակ ոչ ամենայն իրաւք միայն չարին, այլ եւ միւսումն բարոյն ասեմ եւ զովելոյ, զոր իմաստութեամբն բան միամտիցն տալ խոստանայ, քանզի միջակ իմն է հնարախոհութեան անուն»[52]: Ըստ Ս. Կյուրեղի բացատրության՝ խմորը ոչ միայն չարի, այլեւ բարու խորհրդանշանն է: Փաստորեն, դավանաբանական նկատառումներից ելնելով, Սահակ Մռուտ վարդապետը իմաստային վերաձեւումով վկայաբերում է միայն քաղվածքի առաջին հատվածը («Խմորն հնարախոհութեան եղիցի... ամենայն իրաւք միայն չարին»)՝ շեշտելով խմորի բացասական իմաստը եւ զանց առնելով նրա երկրորդ՝ դրական բովանդակությունը, որ տրված է Ս. Կյուրեղի մեկնաբանության վերջում:

Դավանաբան հեղինակների երկերում պակաս հեղինակություն չի վայելել նաև Ս. Կյուրեղի Գանձուց գիրքը, ուր, ինչպես հայտնի է, քննարկվում են երրորդաբանական հարցեր: Գիրք թղթոց ժողովածուի մեջ զետեղված «Թուղթ հռոմոց ի հայս» գրվածքում, շեշտելու համար Քրիստոսի լիակատար աստվածության ու լիակատար մարդեղության իրողությունը, արձանագրված է. «Եւ դարձեալ տեսեալ մարդ զաստուածութեանն գործէր գործս, զի այս իսկ էր ըստ իմանալոյն, եւ զայս իմաստունն Կիւրեղ խրատէ զմեզ ի Գանձին՝ այսպիսի ինչ ասելով. Մի Քրիստոս քարոզեն աստուածային գիրք, քանզի մի է Աստուած հայր եւ

49 «Գիրք թղթոց», էջ 441-442, նա. տպ. 1901, էջ 450:

50 Migne PG, t. 72, 365-474. Մատենագիտական տեղեկությունների համար տե՛ս Clavis Patrum Graecorum, t. ///. p. 5 (5206):

51 «Գիրք թղթոց», 1901, էջ 476:

52 Տե՛ս «Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի», էջ 480, տ. 27-30:

մի Տէր Յիսուս Քրիստոս, քանզի ի գործոց յորքան ինչ վայել է միայնոյ Աստուծոյ ճանաչի Աստուած: Իսկ վասն զի մարմին եղեւ Բանն, ըստ որում գրեալ է. պարտ էր եւ մարդ երեւիլ, եւ ոչ էր այլուստ տեսանելի այսպիսի, բայց միայն ի մարմնոյն անբամբասեցեալն կրից եւ բանից կարեւորապէս, եւ զմարդկան վայելուչսն գործէր եւ խաւսէր. զի արդարեւ ցուցցի եւ մարդ եղեալ: Եւ յետ սակաւուց. Քանզի Աստուած էր ճշմարիտ մարմնով եւ մարմին ճշմարիտ Աստուածութեամբ»[53] :

Ստեփանոս Սյունեցին Գերմանոս պատրիարքին հղած թղթում ժխտելու համար դավանաբան հակառակորդի երկու ներգործության եւ երկու կամքի վերաբերյալ արտահայտած տեսությունը վկայաբերում է հենց հակառակորդի վկայաքաղած հատվածները. «Ոչ ուրեք մին տացուք բնաւորական ներգործութիւն Աստուծոյ եւ արարածի»: «Ապա թէ ոչ ի բնութենէ Հաւր Որդի, զիա՞րդ, զոր ինչ գործէ Հայր՝ գործէ Որդի, վասն զի ոչ է մի ներգործութիւն Աստուծոյ եւ արարածի»[54]: Ինչպես նկատում է Սյունեցին, այս վկայությունների օգնությամբ հակառակորդ կողմը, հանձին Գերմանոս պատրիարքի, նենգափոխելով կյուրեղյան մտքերը, փորձում է նրան վերագրել երկու ներգործության եւ երկու կամքի տեսությունը: Մինչդեռ Ս. Կյուրեղը ոչ թե զատորոշում է աստվածային եւ մարդկային ներգործությունները, այլ դրանք դիտում է մեկ ամբողջության մեջ իբրեւ մեկ իրողություն, այսինքն՝ իբրեւ մեկ աստվածմարդկային բնություն եւ ներգործություն:

Ստեփանոս Սյունեցու՝ Գերմանոս պատրիարքին հղած նույն թղթի մեկ այլ մասում դարձյալ կարդում ենք. «Փորձի առուրս քառասուն պահովք, ապա քաղցնու, եւ սակայն յայտ առնէ, թէ յորժամ կամեցան, որպէս ասէ սուրբն Կիւրեղ ի գիրս Գանձուն. Զի ոչ եթէ բնութիւնն զնա հարկեցուցանէր, այլ ինքն շարժէր զբնութիւնն իւր»[55]: Գանձուց գրքից վկայաբերված հիշյալ հատվածները գրեթե բառացիորեն համընկնում են իրենց սկզբնաղբյուրի հետ[56]: Այս միտքը բնագրային վերաձեւումով առկա է Վարդան Արեւելցու «Ժղլանքում» եւս, ուր պատասխանելով «Որպէ՞ս հաւապալ արժան է Տեառն խաչելութեանն եւ չարչարանացն» հարցին՝ ասվում է. Քրիստոս «ցաւէր եւ վշտանայր կամաւ եւ ոչ ի հարկէ, որպէս եւ քաղցնոյր եւ ծարաւէր եւ վատակէր, բայց ոչ ի բաց կալով Բանին եւ ոչ ակամայ...»[57]:

Բնականաբար Ս. Կյուրեղի հեղինակությունը չէր կարող անտեսվել Հայ Առաքելական Եկեղեցու մեծանուն հայրերից մեկի՝ Ս. Ներսես Շնորհալի հայրապետի (+1173) ժառանգության մեջ: Իբրեւ առանձին ճառընտրային միավոր նրա Գանձուց գրքից մեկ ամբողջական հատված զետեղված է հայերեն հնագույն թղթյա ձեռագրում՝ «Կիւրղի Աղեքսանդրացւոյ ի գրոցն, որ է Գանձ» խորագրով (ա. Ոչ ոք կարէ ասել զտէր Յիսուս, եթէ ոչ Հոգւով Աստուծոյ, իսկ ոմանք Բեղզեբեղաւ ոչ ամաչեն ասել... այլ ի ներքուստ ծածկեալ ունին զսուտ պատրանսն... բ. յաղագս անեղութեան եւ եղելութեան, յորս թէ վեհագոյն եւ արժանաւորագոյն բանիւ... զի պարտ է յէութենէ Հաւր եւ ոչ արտաքուստ կարծել զՈրդի»): Տարընթերցումային մեծ ու փոքր տարբերություններով այն համապատասխանում է Գանձուց գրքի բնագրին: Այն կազմված է Գանձուց գրքի երկու տարբեր հատվածների կցումից[58]:

53 «Գիրք թղթոց», 1994, էջ 429:
54 Անդ, էջ 452-453:
55 Անդ, էջ 458:
56 ՄՄ ձեռ. 112, թ. 189ա, 210բ, 226ա:
57 ՄՄ, ձեռ. 750, թ. 127բ:
58 «Մատեան գիտութեան եւ հաւատոյ, Դաւթի քահանայի» հայերէն թղթյա հնագույն ձեռագիր, 981 թ. (N

Ս. Կյուրեղի երկերից քաղված վկայություններն իբրեւ անառարկելի փաստարկ ընդարձակորեն բերված ու հիշատակված են Հայ Եկեղեցու դավանական մաքրությանը նախանձախնդիր վարդապետ Պողոս Տարոնացու (+1123) «Ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփայի» խորագրով աշխատության մեջ: Ընդդիմաբանելով հակառակորդին՝ Պողոս վարդապետը վկայակոչում է մեզ արդեն ծանոթ Ս. Կյուրեղի Սեկունդոս եպիսկոպոսին հղած թղթի հետեւյալ բառերը. «Յետ միաւորութեան երկու հատուցմանն մի զոլ հաւատամբ զՈրդւոյ զբնութիւնն որպէս զմիոյ, սակայն որպէս զմարմնացելոյ եւ զմարդացելոյ»: Սրանք քաղված են առ Սեկունդոս Ա թղթից[59]: Պողոս Տարոնացին վկայաբերում է Նեստորի դեմ գրված Ս. Կյուրեղի բոլոր երկոտասան նզովները[60]: Իր հակաճառությունը է՛լ ավելի ազդու եւ ներգործուն դարձնելու նպատակով նա դարձյալ դիմում է Ս. Կյուրեղի հեղինակությանը՝ վկայաբերելով նրա՝ Թեոդոս կայսեր հղած թղթի հետեւյալ բառերը. «Թէպէտ եւ ի զանազանիցն եւ յաննմանիցն եկեալ առ միմեանս բնութիւնքն, սակայն ոչ երկու բնութիւնք ասին եւ ոչ երկոյութիւնք եւ յերկու որդիս բաժանեմք զմի Քրիստոս»[61]:

Կիւռ Մանվել կայսեր հղած թղթում կարդում ենք. «Իսկ զմի բնութեանն յեղանակ, զոր ասեմք մեք, մի ոք յայլ դէմս կարծիցի, բայց յաղագս ի յերկուց բնութեանց անբաժանելի միաւորութեանն, զոր ուսաք ի յուղղաճառ վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ ի սրբոյն Կիւրղէ Աղէքսանդրացւոյ ընդդէմ Նեստորի, որպէս եւ գրէ յԱռաջին թղթին, որ առ Սեկունդոս, թէ՝ ա. «խոստովանիմք մի բնութիւն Բանին մարմնացելոյ, որպէս եւ հարքն ասացին»: Իսկ երկրորդումն թղթին որ առ նոյն, եւս յայտնագոյնս ասէ. քանզի նախ դնէ զհակառակացն բան, որք ընդդէմ դառնային ասացելոցն ի նմանէ բանի այնմ, եթէ՝ «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ»: բ. «Զի եթէ յերկուց բնութեանց, ասեն, ժողովեցաւ էմանուէլ եւ ի միաւորութեանն մի բնութիւն երեւի Բանին մարմնացելոյ, հետեւի ամենայն իրաւք պարտ զոլ ասել զնա չարչարելի յիւրն բնութիւն», որոց առնէ պատասխանի յետ յոլովից բանից եւ զայս: Եւս թէ՝ «Զի՞նչ հարկ էր չարչարիլ ի յիւրն բնութիւն, թէեւ ասի յետ միաւորութեանն մի բնութիւն Որդւոյն մարմնացելոյ», քանզի թէ ոչ էր ի բանս տնաւրէնութեանն բնաւորգեալն կրել զչարչարանս, ուղղակի ասէին զայս, թէ՝ հարկ է ամենայնիւ ասել շփոթումն ընդունել եւ խառնակումն, որպէս ծախեցելոյ մարդկայնոյ բնութեան ի նմա: Եւ անգիտացան դարձեալ, որք զուղիղսն թիւրեն, եթէ ըստ ճշմարտութեան է մի բնութիւն Բանին մարմնացելոյ»: Եւ յետ սակաւուց աւրինակաւ յայտնէ զբանն. գ. «ոչ միայն, ասէ, ի վերայ պարզիցն ըստ բնութեան ասի մին ճշմարտապէս, այլ եւ ի վերայ այնոցիկ, որ ըստ շարադրութեանցն են ժողովեալք, որպէս եւ մարդն է ի հոգւոյ եւ ի մարմնոյ, քանզի այլատեսակք են այսոքիկ եւ միմեանց ոչ համազոյք, սակայն միաւորեալք մի բնութիւն մարդոյն կատարեն, թէեւ շարադրութեանն բանիւք է ի ներքս զանազանութիւն ըստ բնութեան ի միաւորութիւն եկելոցն: Աւելորդս խաւսին ապա որք ասենն, զի թէ մի է բնութիւն Բանին մարմնացելոյ, ամենեին եւ ամենայն իրաւք հետեւեսցի շփոթումն լինել որպէս ծախեցելոյ եւ գողացելոյ մարդոյս բնութեան, քանզի ոչ ծախի

2679), էջ 400, «Գիրք Գանձուց», ՄՄ ձեռ. 112, թ.183բ-184ա (ա), թ 184բ (բ):

59 Տե՛ս «Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարօնացւոյ… ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփային…», Կ. Պոլիս, 1752, էջ 136, «Գիրք Պարապմանց», էջ 410:

60 «Թուղթ Պօղոսի Տարոնացւոյ», էջ 146-148, «Գիրք Պարապմանց», էջ 477-490:

61 «Թուղթ Պօղոսի Տարոնացւոյ», էջ 148, «Գիրք Պարապմանց», էջ 245:

եւ ոչ, որպէս ասենն, զողացեալ լինի»[62*]: Վկայությունները քաղված են դարձյալ Պարապմանց գրքից: ա. վկայությունը, ինչպես նկատում է Շնորհալին, իրապես էլ քաղված է Առ Սեկունդոս Առաջին թղթից[63], բ. վկայությունը քաղված է Առ Սեկունդոս Բ թղթից[64], գ. վկայությունը՝ նույն թղթի մեկ այլ մասից[65]:

Ս. Կյուրեղի ժառանգությունը լայնորեն վկայակոչվել է դավանաբանական մյուս կարեւոր աշխատության՝ Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» (1205) երկում: Այս աշխատության Ե գլխում «Կիւրղի Աղէքսանդրու հայրապետի ի ժողովն Եփեսոսի ասացեալ ընդդէմ Նեստորի» խորագրով բերված վկայությունները («Որ ոչ խոստովանեսցի մի Տէր Յիսուս...», «Որ ոք զՏէր մեր Յիսուս բաժանէ յերկուս երեսս...», Եթէ ոք իշխեսցէ ասել...», «Եթէ ոք ոչ յերկուս դէմս եւ յերկուս՝ զաւրութիւնս...», «Եթէ ոք ոչ խոստովանեսցի զԲանն...», «Որ այլ ասէ զախտակրեալն, եւ այլ՝ զոչ ախտակրեալն...») վկայաքաղված են հեղինակի Երկոտասան նզովներից[66]: Ս. Կյուրեղի Առ Սեկունդոս Ա թղթից է քաղված նույն գլխի «Սեկունդոս եպիսկոպոս ասէ. «Արժա՞ն է յեւր միանալոյն...» վկայությունը[67]: Իսկ սրան հաջորդող հատվածը («ասեն հերձուածողքն, թէ որ մի բնութիւն...»)[68] քաղված է Առ Սեկունդոս Բ թղթից[69]: «Նորին ի թղթէն, որ առ Ակակ Մելէտինոյ եպիսկոպոս» խորագրով վկայությունը («Աստուածային գիրք ի Կուսէն ասեն...)[70] խմբագրումն է համապատասխան հատվածի[71]: Դարձյալ Պարապմանց գրքից է քաղված «Նորին՝ Վասն մի բնութեան» խորագրի տակ բերված «այսպիսի գոլ զմիաւորութիւն էմանուէլին...» սկսվածքով հատվածը, որ խմբագրումն է բնագրի համապատասխան մասի[72]: Նույն ժողովածուից է քաղված «նորին՝ ի թղթէն որ առ Թէոդոս թագաւորն» խորագրի ներքո բերված հատվածը («Թէպէտ եւ յանմանից նոյնպէս առ միմեանս...»)[73]: Պարապմանց գրքի Ը գլխից են քաղված «Միաւորեալ եւ մի համարեալ...» «Թէ որոշես զբնութիւնսն, բացագնասցեն ընդ նմա...» հատվածները[74]:

Դավանաբանական միտքը հետագայում եւս շարունակում է պատշաճ հարգանք տածել Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու աստվածաբանական ժառանգության նկատմամբ: Հայ եկեղեցու հայրերը, ի մտի ունենալով կյուրեղյան քրիստոսաբանության բացառիկ կարեւորությունն Ազգային եկեղեցու դավանական նկարագրի պահպանման գործում, նրա վաստակի առավել ներկայանալի հատվածները վկայաբերում են իբրեւ քրիստոսաբանական անառարկելի հաստատումներ:

Ս. Կյուրեղի երկերից բազում վկայություններ են բերված Հայ Եկեղեցու աստվածաբա-

---

62 Տե՛ս «Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Երուսաղէմ, 1871, էջ 149-150:

63 Տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 409:

64 Անդ, էջ 417:

65 Անդ, էջ 418:

66 **Վարդան Այգեկցի,** Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, աշխատ. Շահե քհն. Հայրապետյանի, Ներածութ. Հակոբ Քյոսեյանի, Եր., 1998, էջ 108-109, 115, «Գիրք Պարապմանց», էջ 472-474:

67 «Արմատ հաւատոյ», էջ 109, «Գիրք Պարապմանց», էջ 409:

68 «Արմատ հաւատոյ», էջ 110:

69 «Գիրք Պարապմանց», էջ 417:

70 «Արմատ հաւատոյ», էջ 114:

71 «Գիրք Պարապմանց», էջ 432:

72 «Գիրք Պարապմանց», էջ 30-31, «Արմատ հաւատոյ», էջ 112:

73 «Գիրք Պարապմանց», էջ 223, «Արմատ հաւատոյ» էջ 111:

74 «Գիրք Պարապմանց», էջ 31 «Արմատ հաւատոյ», էջ 111:

նական վասպակն ի մի բերող Ս. Գրիգոր Տաթեւացու (+1409) «Հարցմանց» գրքում եւ «Ոսկեփորիկում»[75]: Ներկայացնենք աղբյուրագիտական ամփոփ դիտումներով.

ա. «Արդ, առաքեալն Պաւղոս, որ զտիեզերս հաստատեաց ի հաւատս ճշմարտութեան ի համագոյ Երրորդութիւն ի մի Տէր, ի մի հաւատ, ի մի մկրտութիւն, ի մի Հայր, ի մի Որդի եւ ի մի Հոգի Սուրբ յանսահմանելի... Ո՛վ ահագին իրացս, դեւք հանդերձ հարբն իւրեանց սատանայիւ Որդի Աստուծոյ կոչեն զառ ի Մարիամայ ծնեալն, եւ սա զՈրդին Աստուծոյ ի մարդ սոսկ փոխարկէ»:

Վկայությունս, որ Ս. Կյուրեղի անունով բերված է «Ոսկեփորիկում»[76], բացակայում է նրա երկերում եւ մեզ հայտնի դավանաբանական աշխատություններում: Այն իրականում մի հատվածն է Պրոկղի՝ Նեստորի դեմ գրված ճառի[77]:

բ. «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ».

Դասական այս բանաձեւը, որ վկայաբերված է Հարցմանց գրքում[78], քաղված է Ս. Կյուրեղի առ Սեկունդոս Առաջին թղթից[79]:

գ. «Եւ այս բազում պատճառի ըստ համեմատութեան լուսոյ առ ճառագայթն իւր... որպէս ոչ է ի մէջ լուսոյ եւ ճառագայթի իւր»:

«Ոսկեփորիկում» առկա այս վկայությունն[80] ակնարկում է Ս. Կյուրեղի «Առ Երեմիաս՝ թէ մի է Քրիստոս՝ Ընդդէմ Նեստորի» գրության հետեւյալ հատվածը. «Քանզի պատկեր աներեւութիւն Աստուծոյ, ճառագայթն փառաց նկարագիր էութեան Հաւր, զոյութեան նորա նկարագիր... Եւ տես՝ զիարդ ի դէմս Քրիստոսի աստուածայնոյ եւ անճառելոյ փառացն Աստուծոյ եւ Հաւր լուսաւորութիւնս փայլատակէ, քանզի ցուցանէ ինքեամբ զԱստուծոյ փառս...»[81] :

դ. «Մի ասեմք զՔրիստոս Աստուած մարդացեալ եւ մի զբնութիւն նորա: Եւ որպէս սուրբ հարքն ասացին. մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ»:

«Հարցմանց» գրքում առկա այս վկայությունը[82] քաղված է Ս. Կյուրեղի առ Սեկունդոս Առաջին թղթից[83] :

ե. «յեր անճառ միաւորութեանն որ ոք որոշումն դիցէ մարդկութեան եւ Աստուածութեան, նզովեալ եղիցի:

«Հարցմանց» գրքում զետեղված այս վկայությունը[84] բովանդակային վերապատումն է Ս. Կյուրեղի «երկոտասան» նզովքներից Գ նզովքի[85]:

զ. «Համանգամայն», այսինքն՝ բոլորովիմբ Աստուած եւ բոլորովիմբ մարդ, իսկ զոյգ եւ հաւասար ընդդէմ է նոցա:

---

75 Վկայությունների քննությունն իրականացնում ենք համաձայն Վազգեն աբղ. (այժմ՝ եպս.) Միրզախանյանի «Սուրբ Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքի և Ոսկեփորիկի հայրախոսական աղբյուրները» վարդապետական ավարտաճառի (Ս. Էջմիածին, 1995, անտիպ):

76 **Գրիգոր Տաթեւացի,** Ոսկեփորիկ, Կ.Պոլիս, 1746, էջ 353-354:

77 Տե՛ս «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Ա, 1836, էջ 628 (=դիակից)

78 «Գիրք Հարցմանց», Երուսաղէմ, 1993, էջ 90:

79 Տե՛ս «Գիրք Դարապմանց», էջ 409:

80 «Ոսկեփորիկ», էջ 122

81 «Գիրք Դարապմանց», էջ 371:

82 «Գիրք Հարցմանց», էջ 83:

83 Գիրք Դարապմանց, էջ 409:

84 «Գիրք Հարցմանց», էջ 46:

85 «Գիրք Դարապմանց», էջ 480:

Դարձյալ քաղված է «Հարցմանց» գրքից[86]: Այն իմաստային հառաջաբերություն է Ս. Կյուրեղի «Առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս յաղագս ուղղափառ հաւատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս» երկի հետեւյալ հատվածի. «Մի եւ նոյն էր Տէր Յիսուս Քրիստոս յերկրպագուես մարդկութենէ եւ յերկրպագելոյն աստուածութենէ զոյ եւ անուանիլ Աստուած համանգամայն եւ մարդ ճշմարտապէս ունելով ի վերայ ինքեան»[87]:

Ինչպես Եկեղեցու մյուս հայրերի (Ս. Բարսեղ Կեսարացի, Ս. Գրիգոր Աստվածաբան, Ս. Գրիգոր Նյուսացի), այնպես էլ Ս. Կյուրեղի երկերը, ունենալով շատ մեծ հեղինակություն եւ աստվածաբանական կշիռ, դասավանդվել են միջնադարի վանական դպրոցներում ու վարդապետարաններում: Հատկապես մեծ է եղել այն վարկը, որ վայելել է վանական շրջանակներում Ս. Կյուրեղի Պարապմանց գիրքը: Ուստի միանգամայն հասկանալի եւ պատճառաբանված է այն, որ Հայ Եկեղեցու դավանության մեծագույն ջատագովներից մեկը՝ Ս. Գրիգոր Տաթեւացին, մասնավոր աշխատություն է նվիրել Ս. Կյուրեղի դավանաբանական կարեւոր երկերն ամփոփող այդ ժողովածուին: Տաթեւացին լուսաբանել է այդ ժողովածուի մեջ տեղ գտած ճառերի դավանաբանական որոշակի հետաքրքրություն ներկայացնող առանձին բառերն ու արտահայտությունները: Ինչպես եւ պատշաճում է, նա իր լուծմունքն սկսում է խորագրի բացատրությամբ. գիրքն ինչու՞ է կոչվում «Պարապմունք», որովհետեւ Ս. Կյուրեղը, հերքելով Քրիստոսի տնօրինության վերաբերյալ եղած բոլոր հերձվածողական գաղափարները, «լի եւ անթերի ի պատասխանիս եղեւ պարապեալ»[88]: Պատասխանելով այն հարցին, թե՝ «Վասն էր յառաջ քան զամենայն զՔրիստոս անունն քննէ»՝ Տաթեւացին ասում է. «Զի ի մարդեղութիւն Փրկչին յառաջ քան զամենայն միաւորութիւն է Բանին Աստուծոյ ընդ մարդկութեանս, որ եւ ապա միաւորութեամբն ընդ մեզ եղեալ փրկեաց զմեզ»[89]: Արդեն Քրիստոս անունն ինքը, որ նշանակում է օծյալ, մատնանիշ է անում միավորության պահը. «ըստ որում էօծ Բանն Աստուած զմարդկութիւն միաւորութեամբն առ ինքն»: Ուրիշ խոսքով՝ Քրիստոս անվան օծյալ ստուգաբանությունն ինքնին ունի քրիստոսաբանական նշանակություն եւ իր խորքի մեջ ուղղափառ բովանդակություն:

Բացատրելով Ս. Կյուրեղի «Որ ի մեզն անդրանիկ» բառերը՝ Տաթեւացին գրում է. «Ըստ չորից իմանի անդրանկություն, նախ, զի նա ի Հաւրէ է սկսեալ եւ եղեալքս՝ ի մաւրէ, եւ նա անժամանակ ծնունդ, իսկ մեք ի ժամանակի արարեցեալք: Երկրորդ՝ անդրանիկ է ըստ սրբութեան, որ ոչ արար մեղս... երրորդ՝ անդրանիկ է ըստ շնորհաց Հոգւոյն, զոր ընկալաւ, ոչ վասն կարաւորութեան, զի լիապէս ունէր, այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ, զի յանդամս իւր սփռեսցէ: Չորրորդ՝ անդրանիկ է ըստ յարութեան, ըստ այնմ՝ «անդրանիկ եղեւ մեռելոց եւ պտուղ ննջեցելոց»:

Պակաս ուշագրավ չէ Էմմանուէլ անվան ստուգաբանությունը. «Ի յերբայեցւոցն ի մերս ընդ մեզ Աստուած թարգմանի Էմմանուէլն - ասում է Տաթեւացին եւ հետո բացատրում. «Ամենայն իր որ լինի ընդ իրի, երեք եղանակաւ է՝ կամ միաւորութեամբ երկուց ընդ միմեանս,

86 «Գիրք Հարցմանց», էջ 90:

87 Տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 260:

88 «Գրիգորի աշակերտի Յոհաննու Որոտնեցւոյ քաջ հռետորի աշխատասիրեալ ի լուծումն Պարապմանց սրբոյն Կիւրղի՝ ի խնդրոյ ուրումն բանասիրի՝ Գէորգեայ նորին հարազատի», տե՛ս հետեւյալ հրատ. մեջ «Գիրք Պարապմանց», էջ 519:

89 Անդ, էջ 530:

կամ գրութեամբ կամ իմացմամբ: Երկուց ընդ միմեանս, որպէս հոգի ընդ մարմինն, դրութեամբ՝ որպէս անյայտ նիշն՝ գիծն եւ մակերեւոյթն, իմացմամբ՝ որպէս ծառայն ընդ Տեառն եւ խնամելն ընդ խնամողին առընչաբար: Արդ, զառաջինն բնութեամբ ասէ, զերկրորդն՝ տեղեաւ, զերրորդն՝ նախախնամութեամբ»: Արդ, այս երեք կարգի հարաբերություններից որի՞ն է պատկանում «Էմմանուէլ» անունը. աստվածաբանական խորին թափանցումով Տաթեւացին բացատրում է, որ Էմմանուէլը չի պատկանում ո՛չ երկրորդ (տեղեաւ) եւ ո՛չ էլ երրորդ (նախախնամութեամբ) հարաբերությանը, քանզի Աստված տեղով չի սահմանափակվում եւ ոչ էլ տերը խնամատարությամբ մեզ հետ եղավ, ինչպես Հեսուի եւ Մովսեսի պարագային: Ուրեմն Աստված մեզ հետ եղավ մի երրորդ հարաբերությամբ, այն է՝ «ըստ բնութեան միաւորութեան, զի զայն նշանակէ ընդ մեզ եղեւն, այսինքն՝ Աստուած մերովս կերպիւ, որ նոյն ինքն է Աստուած մարդացեալ»[90]:

Այս բացատրության հետ ներքին աղերսի մեջ է «միաւորութիւն» եզրի մեկնաբանությունը, որ հեղինակը տալիս է Պարապմանց գրքի Ութերորդ ճառի «Միաւորութեան իր ըստ բազում եղանակաց կատարի» բառերը լուսաբանելիս: «Միաւորութիւն սեռաբար տրամատրի յերիս, այսինքն՝ յանշաղկապն, ի շաղկապեալն եւ ի շարադրեալն. որպէս բաժանէ ասէ ասելովն՝ սիրովն եւ առընթեր դրութեամբ եւ խառնմամբ: Արդ, անշաղկապ միաւորութիւն բաժանի երիս տեսակս, զի միաւորի կամ էութիւն ընդ էութեան կամ պատահումն ընդ պատահման կամ էութիւն ընդ պատահման»[91]: Երկու էությունների հարաբերությունը կարող է լինել շփոթմամբ (ինչպես ջուրն ու գինին) եւ անշփոթ (ինչպես կրակը երկաթի հետ, հոգին մարմնի հետ): Պատահմունքն էութեան հետ իբրեւ կանոն հարաբերվում է անշփոթ կերպով (ինչպես որակը եւ քանակը գոյացության հետ), որովհետեւ դրանք իրարից դյուրությամբ զատորոշվում են): «Շաղկապաւ» իրագործվող միավորությունը եւս բաժանվում է երեքի. «զի է, որք միաւորեալքն են, էութիւնք են, եւ շաղկապն պատահումն, որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց յաւժարութեամբ եւ խորհրդով, պատահմամբ սիրոյ շաղկապին: Եւ են, որք պատահմունք են եւ էութեամբ շաղկապին, որպէս բոլորակ ձեւն եւ գոյն ենթակայ նիւթովն միաւորին, եւ զանազան ձայնքն քնարի միով ենթակայ ադովն միաւորին: Եւ են, որք էութիւնք են, եւ էութեամբ շաղկապին, որպէս երկոքին նիւթք՝ սոսնձով կամ երկաթով»[92]: Աստվածաբանական, փիլիսոփայական այսօրինակ վերացարկումով Տաթեւացին փորձում է ցույց տալ Քրիստոսի բնությունների հարաբերակցության եղանակը: Այս բացատրությունը լիովին համապատասխանում է Ս. Կյուրեղի քրիստոսաբանությանը. անշաղկապ հարաբերության պարագային Քրիստոսի բնություններն անշփոթ են, որոշարկված, բայց նրանք միավորվում են ինչպես պատահմունքը (մարդեղությունը) էության՝ գոյացության (աստվածության) հետ: Բնությունների հարաբերության (միավորության) այն երեսակն է ներկայացնում շաղկապաւ միավորությունը, ուր գլխավորն այն ընդհանուրն է, որով միավորված են տարասեռ իրողությունները՝ կազմելով մեկ աստվածմարդկային բնություն:

Դարձյալ, բնությունների հարաբերակցությանն է վերաբերում Ս. Կյուրեղի «Զարչարիլով ինքն անչարչարաբար» բառերի բացատրությունը, որ տալիս է Գրիգոր Տաթեւա-

90 Անդ, էջ 524:
91 Անդ, էջ 539:
92 Անդ, էջ 539-540:

ցին. «Ասր ընդդէմ Նեստորի ասէ, որ սոսկ մարդ ասէր չարչարեցեալ: Իսկ Սուրբն Կիւրեղ փախչելով յերկուց հակառակ հերձուածողացն այսինքն՝ յորոց ընդ չարչարանաւք արկանեն զբնութիւն Բանին, եւ յայնցանէ, որք որոշեն զբանն ի մարմնոյն, ուսուցանէ ուղիղ դաւանութիւն ասելով՝ Ինքն Աստուած չարչարի անչարչարաբար եւ ինքն մեռանի անմահաբար»[93]:

Կյուրեղյան քրիստոսաբանության այսօրինակ մեկնաբանությամբ Տաթեւացին ցույց է տալիս, թե Հայ Եկեղեցին դավանաբանական ի՛նչ խորությամբ եւ ճշգրտությամբ է ընկալել Ս. Կյուրեղի վարդապետական սխրանքը: Բովանդակ միջնադարի հայ եկեղեցական (մասնավորաբար՝ աստվածաբանական) միտքն իր դավանական հիմնավորումների մեջ առաջնորդվել է Ս. Աթանասի, կապադովկյան հայրերի, Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու հեղինակությամբ, հատկապես քրիստոսաբանության բնագավառում՝ աչքի առջեւ ունենալով վերջինիս վաստակը:

93 Անդ, էջ 542: